Sparkassen-ի դպրոցական ծառայություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ. ՈՒՂԵՑՈՒՅՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տարրական տնտեսական կրթություն երիտասարդների համար

Միջնակարգ և ավագ դպրոց

50
ԴՐԱՄ
20
ԴՐԱՄ
2003
5000
2000
Ֆինանսական
Անձնագիր

Ֆինանսական անձնագիր. ուղեցույց ուսուցիչների համար

Տարրական տնտեսական կրթություն երիտասարդների համար

Միխայել Շուհեն, Հանս Յուրգեն Շլյոսեր, Նադինե Մայեր

Նյութը տրամադրվել է Sparkassen-ի դպրոցական ծառայության կողմից՝ Հարավային Կովկասում, Ուկրաինայում և Իրանում իրականացվող Պատասխանատու Ֆինանսավորում տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամի կողմից և ֆինանսավորվում է Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության կողմից:

Շտուտգարտի գերմանական Sparkassen հրատարակչություն (Deutscher Sparkassen Verlag Stuttgart)

Հեղինակներ

Տնտեսական կրթության կենտրոնը հմտությունների կենտրոն է, որը տրամադրում է տնտեսագիտական գիտելիքներ ինչպես աշակերտների և ուսանողների, այնպես էլ՝ շարունակական կրթության համար:

Դոկտոր պրոֆ. Հանս Յուրգեն Շլյոսեր
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) ղեկավար

Դոկտոր Միխայել Շուհեն
Զիգենի համալսարանի Տնտեսական կրթության կենտրոնի տնօրեն

Նադինե Մայեր
Տնտեսական կրթության կենտրոնի (ZöBiS) ուսուցչուհի տնտեսական կրթության ոլորտում

Ցուցումներ

«Աշակերտ» և «ուսուցիչ» ձևակերպումները ներառում են նաև «աշակերտուհի» և «ուսուցչուհի» ձևերը: Այս տարբերակներն ընտրվել են՝ ընթերցանությունը հեշտացնելու նկատառումներից ելնելով:

Հեղինակային իրավունք

Գրքում ներառվել են հեղինակային իրավունքով պաշտպանվող ստեղծագործությունների բոլոր հղումները, սակայն դրանց ամբողջականությունը կամ ճշգրտությունը երաշխավորված չէ:

© Գերմանական Sparkassen հրատարակչություն ՍՊԸ, Շտուտգարտ (Deutscher Sparkassen Verlag GmbH, Stuttgart), 2013
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Այս ձեռնարկը՝ բոլոր բաժինները ներառյալ, պաշտպանված է հեղինակային իրավունքով: Առանց հրատարակչության համաձայնության ձեռնարկի կիրառումը անթույլատրելի և պատժելի է հեղինակային իրավունքների մասին օրենդրությամբ: Այն չի կարող վերարտադրվել էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով:

Խմբագիր՝ Վերներ Ուելցեն
Տպագրիչ՝ Ժանեթ Նիկոլ
Շապիկի ձևավորում՝ ըստ Groothuis-ի, Lohfert-ի, Consorten-ի, glcons.de-ի գաղափարի
Նկարներ՝ Մաթիաս Զեբուրգեր
Համակարգչային ձևավորում՝ visee-design.de, Շտուտգարտ
Տպագրություն և կապմ՝ Schätzl Druck & Medien, Դոնաուվյորթ
Տպագրված է Գերմանիայում:

1-ին հրատարակություն, 03/2013
310 720 400

FSC
www.fsc.org
MIX
Papier aus verantwortungsvollen Quellen
FSC® C107551

Ֆինանսական անձնագիր. ուղեցույց ուսուցիչների համար

Տարրական տնտեսական կրթություն երիտասարդների համար

Տնտեսական և ֆինանսական կրթություն **4**

Sparkassen–ի դպրոցական ծառայության ֆինանսական անձնագրի հայեցակարգը **8**

Դասավանդման բաժիններ 8
Ցուցումներ դասավանդման մեթոդների վերաբերյալ 10
Կիրառման հնարավորություններ 13
Ընթացք 13
Դասավանդման նյութեր 14

1 Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար **15**

1.1 Դասի բովանդակություն 15
1.2 Ընթացակարգ 18

2 Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար **22**

2.1 Դասի բովանդակություն 22
2.2 Ընթացակարգ 27
2.3 Ցուցումներ առաջադրանքների կատարման համար 32

Ներածություն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գնալով առավել արդիական է դառնում «Տնտեսական կրթությունը պետք է սկսել դպրոցից» գաղափարախոսությունը: Այս նոր գաղափարախոսության համար հիմք են հանդիսանում այսօրվա աշակերտների առավել քան երբևէ ներգրավվածությունը տնտեսական տարբեր իրավիճակներում. նրանք սպառում են, խնայում, կատարում ներդրումներ, դիմում են աշխատանքի ու պրակտիկայի կամ արձակուրդների և աշխատանքի ընթացքում առերեսվում տնտեսական հարցադրումների հետ: Իրենց դպրոցական միջավայրում նրանք հանդես են գալիս որպես տնտեսության գործող անձինք՝ հիմնադրելով, օրինակ, աշակերտական խորհուրդներ կամ կազմակերպելով դասարանական տոներ ու էքսկուրսիաներ: Հետաքրքրական է, որ այս ամենը նրանց ինչ-որ կերպ հաջողվում է առանց որոշակի գիտելիքների:

Տնտեսական կրթության հիմնական նպատակն է կրթել երեխաներին ու երիտասարդներին իրենց դերերում որպես սպառող, վաստակող և տնտեսվարող քաղաքացի: Այն իր մեջ ներառում է տարբեր ուղղություններ ու ենթաոլորտներ, որոնց բաղադրիչներն են տնտեսաքաղաքական, արտադրատնտեսական, ֆինանսական, սպառմանն ու մասնագիտական կողմնորոշմանն ուղղված կրթությունն ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման դաստիարակությունը: Տնտեսական կրթության այս սկզբունքներին համահունչ են ֆինանսական անձնագրի կոնցեպտը և Sparkassen-ի դպրոցական ծառայության՝ մասնագիտական կողմնորոշմանն ուղղված կրթության վերաբերյալ նյութերը: Ընդ որում, դպրոցական ծրագրի ամբողջական կիրառումը պարտադիր չէ, քանի որ կարելի է տարբեր ոլորտներից վերցնել որոշ թեմաներ և քննարկել դրանք առանձին օրինակների տեսքով:

Տնտեսաքաղաքական կրթությունն, ըստ էության, տնտեսվարող չափահաս քաղաքացու և նրա՝ տնտեսաքաղաքական կյանքին մասնակցելու հնարավորությունների մասին է: Եթե առաջնորդվենք այն ընկալումով, որ տնտեսական կարգը հանրային-իրավական կառույց է, և պետությունը այդ կառույցի տերն է, ապա տնտեսաքաղաքական առանցքային գործոնները, ինչպես, օրինակ, մրցակցության, սպառման, ֆինանսական, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական և աշխատանքային հարցերի վերաբերյալ վարած առանցքային քաղաքականությունը, վճռորոշ դեր կարող են խաղալ հասարակությունների ապագա հնարավորությունների կերտման համար (Շլյոսեր, 2007): Այդ իսկ պատճառով ձեռք բերված գիտելիքների հիման վրա տնտեսաքաղաքական ազդեցության դիտարկումը կարևոր է դառնում երիտասարդների համար ապագա մասնագիտության ընտրության հարցում (Կարպե; 2001, էջ 65): Տնտեսաքաղաքական կրթության նպատակներն են ինքնորոշումն ու անհատական գործելու ունակությունը (Ալբերս; 1987, էջ 189-ից): Չափահաս քաղաքացին պիտի ճանաչի տվյալ տնտեսական կարգի սահմանափակումներն ու հնարավորությունները:



Օրինակ՝ տնտեսական կարգի սահմանափակում են հանդիսանում մրցակցային դաշտում առկա իրավական սահմանափակումները, որոնք կապված են իրականացվող տնտեսական գործարքների պայմանների փոփոխության կամ տնտեսական գործարքներ իրականացնելու համար գործընկերներ փնտրելու հնարավորության հետ: Նմանօրինակ իրավեկումն անհրաժեշտ է նաև գլոբալ մասշտաբով, քանի որ ազգային տնտեսաքաղաքական որոշումների ժամանակ գլոբալացման հետ կապված հարցերը չեն կարող այլևս անտեսվել (Կրուբեր, 2008):

Փողի հետ հմուտ վարվելու կարողությունը կյանքի արդյունավետ պլանավորման որոշիչ հիմունքներից մեկն է, քանի որ առանց ֆինանսական կրթության այլևս գրեթե հնարավոր չէ տնային տնտեսության հմուտ մասնակցությունը տնտեսական կյանքին: Միևնույն ժամանակ հասարակությունն ու քաղաքականությունն են քաղաքացուց պահանջում սեփական պատասխանատվության բարձր գիտակցում, հատկապես սոցիալական ապահովության համակարգերի վերակառուցման գործընթացին համահունչ: Աճում է նաև բանկերի, ապահովագրական ընկերությունների և ֆինանսական ծառայություն մատուցող այլ կազմակերպությունների ֆինանսական առաջարկների բազմազանությունը, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտական գիտելիքներ չունեցող անձը կարող է հստակ չպատկերացնել իրեն առաջարկվող հնարավորություններն ու հետևաբար գերծանրաբեռնված զգալ առաջարկների բազմազանությամբ:

Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ աշակերտները հնարավորություն ունենան ի սկզբանե ծանոթանալ ֆինանսական ընդհանուր կրթության հիմնական բաղադրիչներին և այնպիսի կարևոր թեմաներին, ինչպիսիք են, օրինակ՝ «ֆինանսական կառավարում», «ընթացիկ հաշիվ», «խնայում և ներդրում», «վարկ», «ունեցվածքի ձևավորում» և «կենսաթոշակային ապահովում»: Նմանատիպ ֆինանսական տարրական կրթության բացն առօրյայում կարող է հանգեցնել այն իրավիճակին, երբ մարդիկ բավարար ժամանակ չհատկացնեն կենսաթոշակային ապահովման, անհրաժեշտության դեպքում վարկավորման կամ ընդհանրապես անձնական ֆինանսների կառավարման հարցին: Կարևոր է փաստել, որ նշված գիտելիքների և հմտությունների պակասն ամենաքիչը կարող է հանգեցնել ներդրված կապիտալից ստացվելիք շահույթի կորստի: Ավելին, նման գիտելիքների պակասի հետևանք կարող է դառնալ նաև ունեցվածքի և սոցիալական դիրքի կորուստը:

Տնտեսական կրթության «սպառողի դաստիարակություն» ենթաոլորտի նպատակն է «իրազեկված սպառում» (Պլայս; 1994, էջ 66) սովորեցնելը: Այն ուսումնասիրում է պատասխանատու սպառմանն ուղղված պահվածքը: Այստեղ չափազանց կարևորվում է վերլուծական և քննադատական մտածելակերպի դրսևորումը: Օրինակ՝ «քննադատ» սպառողը նա է, ում հաջողվում է սառը դատելով պատկերացնել ապագա գործարքի բնույթն ու դրա շրջանակներում կատարելիք անհրաժեշտ քայլերը: Նա, ով իր նպատակները որոշում է հաշվի առնելով պատասխանատու սպառման մոտեցումները, պատասխանատվության զգացում ունի իր իսկ առաջ, իրեն շրջապատող մարդկանց առաջ, ապագա սերունդների առաջ […]» (Փլայս; 1994, էջ 68): Սպառողների դաստիարակության համար սա նշանակում է. «Օրինակ՝ սպառողների կողմից գների համեմատություն չկատարելը, չնայած գնային երբեմն հսկայական տարբերություններին տեղյակ լինելուն, կարող է դիտվել որպես ոչ ռացիոնալ պահվածք: Նմանատիպ գնահատականի հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ տեղեկատվության անսահմանափակ քանակության առկայության դեպքում մարդը մշտապես կայացնում է ռացիոնալ որոշումներ: Իրականում որոշման ռացիոնալ լինել կամ չլինելը կարելի է գնահատել այն դեպքում, երբ հաշվի առնվեն գնային համեմատությունից բխող վնասներն ու օգուտները, քանի որ, օրինակ, շուկաներում առկա գնային տարբերությունների լիարժեք ուսումնասիրումը ենթադրում է որոշակի ֆինանսական, ինչպես նաև ժամանակի հետ կապված ծախսեր: Երբ սպառողները գիտակցաբար հրաժարվում են գների համեմատությունից, տեղյակ լինելով գոյություն ունեցող գնային տարբերության մասին, դա խոսում է այն մասին, որ նրանց համար այդ գործընթացից բխող փողի, ժամանակի, ֆիզիկական և հոգեբանական ծանրաբեռնվածության ծախսն ավելին է, քան գնային ուսումնասիրությունից բխող խնայելու ներուժը» (Կրոլ; 1994, էջ72): Բացի այդ, հաճախ սպառողն ուղղակի չի ունենում բավարար գիտելիք և տեղեկատվություն որոշ ոլորտների մասին: Այդ իսկ պատճառով տեղեկացվածության հնարավորությունների, ինչպես նաև իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքի մատուցումը, օրինակ՝ առցանց գնումների վերաբերյալ, սպառողի կրթության կարևորագույն նպատակներից է:

Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման դաստիարակությունը՝ որպես ենթաոլորտ, 1980-ական թթ.-ից տնտեսական կրթության մաս է կազմում, քանի որ էկոլոգիական և տնտեսական համակարգերի փոխազդեցություններից են բխում շրջակա միջավայրի հետ կապված բազմաթիվ խնդիրներ (Զեբեր; 2008, էջ 315):

ԴԵԳԵՈՆ (2004)

Եթե արդյունաբերության արտադրական գործընթացը դիտարկենք որպես արտադրության, սպառման և շրջակա միջավայրի խնդիրները կապող օղակ, ապա դրա շրջանակներում քննարկման կարող են դրվել ոչ միայն սուղ ռեսուրսների, արտադրական գործընթացի ժամանակ առաջացող հնարավոր թափոնների ու արտանետումների մասին թեմաները, այլ նաև արտադրանքի սպառմանը վերաբերող հարցերը: Ժողովրդական տնտեսության տեսանկյունից մտածելու տեղիք են տալիս բնության չարաշահումը, շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականությանն առնչվող գործիքների տնտեսական վերլուծությունը (օրինակ՝ արտանետումների վերաբերյալ որդեգրված մոտեցումները) և դրանց հետ կապված ինստիտուցիոնալ շրջանակները, ինչպես նաև կենսաբանական բազմազանության պաշտպանության նպատակով կիրառվող քաղաքական գործիքները: Սակայն հասարակության տեսանկյունից բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման քննարկումների մաս է կազմում նաև սերունդների միջև արդարության պահպանումը (օր.՝ կենսաթոշակը):

Տնտեսական կրթության հիմքում ընկած են հինգ կարևոր մոտեցումներ՝ «որոշումներին տալ տնտեսական հիմնավորում», «առևտրային իրավիճակները ենթարկել տնտեսական վերլուծության», «բացատրել տնտեսական երևույթների կապերը», «հասկանալ տնտեսության առանցքային պայմաններն ու մասնակցել դրանց ձևավորմանը», ինչպես նաև «կոնֆլիկտները դատել հեռանկարների և էթիկայի տեսանկյունից» (Դեգեոն, 2004):

Sparkassen-ի դպրոցական ծառայության ֆինանսական անձնագրի հայեցակարգը

Sparkassen-ի դպրոցական ծառայության ֆինանսական անձնագրի հայեցակարգը ներառում է նյութեր միջնակարգ և ավագ դպրոցների համար: Միջնակարգ դպրոցի համար նախատեսված ֆինանսական անձնագիրը տրամադրում է գիտելիքներ ընդհանուր ֆինանսական կրթության ոլորտի վերաբերյալ: Ավագ դպրոցի ֆինանսական անձնագրի շրջանակներում ուսումնասիրված բովանդակությունն ընդհանրացվում է և կապվում տնտեսական երևույթների հետ: Դասընթացը նպատակ ունի կրթել երիտասարդներին որպես սպառողներ և նրանց իրազեկել համացանցի օգտագործումից բխող հնարավոր վտանգների մասին, ինչպես նաև տեղեկացնել, օրինակ, բանկային առցանց ծառայություններից օգտվելիս կամ առցանց առևտուր կատարելիս նրանց անվտանգությանը վերաբերող հարցերի մասին:

տնտեսական և
ֆինանսական
կրթություն

Դասավանդման բաժիններ

Ֆինանսական անձնագիր հայեցակարգի նպատակն է նպաստել աշակերտների ֆինանսական և տնտեսական կրթության վարգացմանը միջնակարգ և ավագ դպրոցներում: Ընդ որում, հայեցակարգն իրենից ներկայացնում է պարուրաձև ծրագիր և փորձում ներառել տնտեսական կրթության տարբեր բնագավառներ:

Ֆինանսական անձնագրի դասաժամեր	
Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար	17 դասաժամ
Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար	12 դասաժամ

Դասավանդման բաժիններ

Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար

	Բովանդակություն	Տնտեսական կրթության ոլորտ
Բաժին 1	**Տնտեսվարության պահանջմունք, կարիք և անհրաժեշտություն**	Ձեռնարկատիրական և տնտեսաքաղաքական կրթություն
Բաժին 2	**Գործունակություն**	Սպառողների կրթություն
Բաժին 3	**Ֆինանսական կառավարում**	Ֆինանսական կրթություն և սպառողների կրթություն
Բաժին 4	**Ընթացիկ հաշիվ**	Ֆինանսական կրթություն և սպառողների կրթություն
Բաժին 5	**Խնայում և ներդրում**	Ֆինանսական կրթություն և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման կրթություն
Բաժին 6	**Վարկ**	Ֆինանսական կրթություն և սպառողների կրթություն

Ֆինանսական անձնագիր ավագ դպրոցի համար

	Բովանդակություն	Տնտեսական կրթության ոլորտ
Բաժին 1	**Պետություն, տնտեսություն և հասարակություն**	Տնտեսաքաղաքական կրթություն
Բաժին 2	**Տնտեսություն+քաղաքականություն = տնտեսական քաղաքականությունն**	Տնտեսաքաղաքական կրթություն
Բաժին 3	**Ո՞րն է սոցիալական շուկայական տնտեսության «սոցիալական» բաղադրիչը**	Տնտեսաքաղաքական կրթություն
Բաժին 4	**Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում**	Ֆինանսական կրթություն և սպառողների կրթություն

Ցուցումներ դասավանդման մեթոդների վերաբերյալ

Ֆինանսական անձնագրերի հայեցակարգը ենթադրում է մեթոդապես գործնական ուղղվածություն ունեցող մոտեցում: Այսպես, օրինակ, գնագոյացման սկզբունքները մշակվում են տնտեսական գիտափորձերի օգնությամբ: Նպատակն է միջնակարգ դպրոցից սկսած վերանայել բացառապես տեքստային ուղղվածություն ունեցող դասային կառուցվածքը:

Այսպես, օրինակ, «շուկայական տնտեսություն» բաժինը, որի նպատակն է ներկայացնել առաջարկի և պահանջարկի միջև առկա հիմնային կապերը, աչքի է ընկնում ուսումնական խաղային կոմպոնենտներով: Հատկապես արժեքավոր են տնտեսական գիտափորձերը, որոնք թույլ են տալիս խաղի միջոցով ոչ միայն ուսումնասիրել միկրոտնտեսական մոդելներ, այլև՝ քննադատաբար վերլուծել դրանք: Օրինակ՝ **տնտեսական գիտափորձերում** աշակերտները ստանձնում են տարբեր դերեր: Դերային քարտերի միջոցով տրվող խթաններով և խոչընդոտներով առաջնորդվելով՝ նրանք ստանձնում են տնտեսական դերեր նախապես սահմանված խաղային իրավիճակի շրջանակներում: Խաղի միջոցով ձեռք են բերվում արժեքավոր տվյալներ և արդյունքներ (օր.՝ գնման և վաճառքի գները), որոնք հետագայում կարելի է քննարկել դասի անդրադարձի փուլում:

Միջնակարգ դպրոցի ֆինանսական անձնագրի դասավանդումն ընթանում է երկու գիտափորձի միջոցով՝ աճուրդի անցկացում և շուկայական գիտափորձ գնագոյացման թեմայով: Տնտեսական գիտափորձերը վերհանում են Բրուների կողմից քննարկման դրված հետազոտական ուսման մեթոդաբանական կոնցեպցիան: Դիտարկման կենտրոնում է աշակերտը, ոչ թե՝ ուսուցիչը: Ուսումը կառուցվում է նախ և առաջ աշակերտների փորձառությամբ և ուսումնական նյութի տրամաբանական ընթացքով: «Սովորել կառուցվածք նշանակում է սովորել, թե ինչպես են տարբեր իրեր և երևույթներ իրար հետ հարաբերվում» (Բրուներ; 1980, էջ 22): Հետևաբար, առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ հարաբերակցությունները, կապերը և կանոնները: Այսպիսով՝ առանձին փաստերը, որոնք հաճախ հանդես են գալիս որպես իներտ գիտելիք, որպես ուսումնական նպատակ հետին պլան են մղվում:

Տնտեսական գիտափորձերի դիագրամ

1 >>>	2 >>>	3 >>>	4 >>>	5
Ծանոթություն խաղային իրավիճակին	**Ռակմավարության բացահայտում**	**Խաղ**	**Արդյունքների ամփոփում**	**Համեմատություն տեսության հետ**
Բացատրվում են խաղային իրավիճակն ու կանոնները	Այստեղ պահանջվում է ներմուծել ռակմավարական և բակմակողմանի մտածելակերպ:	Ուսուցիչը վարում է խաղը, իսկ աշակերտները ստանձնում են դերեր և միաժամանակ կատարում դիտարկումներ:	Արդյունքները հավաքագրվում և արձանագրվում են:	Արդյո՞ք խաղում մշակված փորձնական արդյունքները համընկնում են տեսության կանխատեսումների հետ:

Ցուցումներ դասավանդման մեթոդների վերաբերյալ

Սցենարային պլանավորումը մեթոդ է, որի միջոցով կարելի է հասկանալ առանձին գործոնների դրական և բացասական ազդեցությունները և այդ գործոնների կիրառմամբ մշակել ապագայի սցենարներ: Սցենարները ծառայում են հասարակական խնդիրների, ռիսկերի, ինչպես նաև հնարավորությունների պարզաբանմանը: Ի տարբերություն պարզ կանխատեսումների՝ սցենարային տեխնիկայի պարագայում կիրառվում են խիստ որակական տեղեկություններ, ինչի շնորհիվ ստանում ենք առավել ամբողջական պատկեր: Այս կերպ հնարավոր է մշակել զարգացման տարաբնույթ և միաժամանակ հակասական ուղիներ: Գործընթացում էականը հետագա ցանկալի կամ անցանկալի զարգացումները որոշելը չէ, այլ խնդրահարույց իրավիճակների դիտարկումը՝ ազդեցության տարատեսակ գործոնների և խանգարող իրավիճակների զարգացմանը համընթաց:

Սցենարային պլանավորման դիագրամ

1 >>>

Հանձնարարությունների և խնդիրների վերլուծություն

Այստեղ վերհանվում են խնդրի էական դրսևորումները, կապերը, պատճառները և նշանակությունները: Խնդրի տեղայնացումը, որը պետք է ամրագրվի գրավոր կերպով, տեղի է ունենում նյութական, տարածական և ժամանակային առումներով:

2 >>>

Բանալի բառերի որոշում

Նախ որոշվում են այն ոլորտները, որոնք ազդեցություն են ունենում խնդրի վրա: Դրանք հիմք են հանդիսանում ազդեցության տարատեսակ գործոնների վերհանման համար: Այնուհետև այդ ազդեցության գործոնները ներառվում են մատրիցայի մեջ: Դրան հաջորդող վերլուծության մեջ մշակվում են բանալի բառերի մեջ եղած հարաբերությունները: Այդ արդյունքները հիմք են ծառայում լավագույն և վատագույն դեպքերի միասնական դիտարկման համար:

3

Խնդրի լուծման ռազմավարություններ և միջոցառումներ

Վերջին փուլը սկսվում է խոչընդոտող իրադարձությունների վերհանմամբ՝ կանխարգելող միջոցառումների տեսական զարգացման համար: Դրանց հետևանքները կշռադատելուց հետո պատրաստվում է գործողությունների ծրագիր, որը ներառում է ինչպես դերեր և գործիքներ, այնպես էլ դրանց կիրառումը սցենարի ցանկալի զարգացման մեջ:

Ցուցումներ դասավանդման մեթոդների վերաբերյալ

Խաղերը ներկայացնում են հասարակական և տնտեսական ոլորտներում որոշումների կայացման և գործողությունների իրագործման գործընթացներ՝ հիմնված որևէ մոդելի վրա: Դրանք ոգեշնչում են աշակերտներին ակտիվորեն դիտարկել սպասվող գործընթացների նախապայմանները, ընթացքը, հետևանքները, ինչպես նաև փոխկախվածությունները, որոնք նրանց պետք են իրենց որոշումները գործարկելու համար:

Սա ենթադրում է, որ աշակերտները կկարողանան վեր հանել խնդիրը, ձևակերպել և մշակել սեփական նպատակները, ինչպես նաև կշռադատել համապատասխան լուծման հնարավորությունները և դրանցից բխող հետևանքները: Մեծ մասամբ դրա հետ են կապված տեղեկության ինքնուրույն հայթայթումը, ինչպես նաև որոշում կայացնելու համար առկա տարբերակների գնահատումը: Խաղերն այնպես են հաշվարկված, որ ստանձնած նպատակները մշտապես փոփոխում են նոր խաղափուլի սկզբնական իրավիճակը, որով և փոփոխական են դառնում որոշումների կայացման նախապայմանները:

Ռազմավարական են կոչվում այն խաղերը, որոնց արդյունքները պայմանավորված չեն պատահական իրադարձություններով, այլ պլանավորված և տարբեր փուլերի արդյունքում հստակ հաշվարկած մոտեցման արտացոլումն են: Խաղերը հարմար են ընդհանրական և համակարգային մտքի զարգացման համար, քանի որ ռազմավարությունները կառուցվում են հնարավոր հետևանքների վերլուծության հիման վրա:



Կիրառման հնարավորություններ

Ֆինանսական անձնագրի կոնցեպտը հնարավոր է կիրառել միջնակարգ և ավագ դպրոցի հասարակագիտություն և մաթեմատիկա առարկաների շրջանակներում: Նախապայմանը աշակերտների ընդհանուր ֆինանսական կրթության մասին տեղեկացվածության աստիճանի բարձրացումն է: Երիտասարդների ընդհանուր ֆինանսական կրթությունը նախատեսված է կապմակերպել առանձին բաժինների միջոցով: Դա նշանակում է, որ նյութերը կարող են կիրառվել նաև առանձին, թեև ցանկալի է բաժինների միասնական կիրառումը:

Ֆինանսական անձնագրերը նպատակահարմար է կիրառել այն առարկաների շրջանակներում, որոնք ներառում են տնտեսական կրթությանն առնչվող բաղադրիչներ:

Այսպիսով՝ ուսուցիչներին հնարավորություն կընձեռվի ընտրել առանձին բաժիններ տնտեսական և ֆինանսական հարցերում աշակերտների գիտելիքների ամրապնդման համար:

Ընթացք

Առանձին բաժինները պետք է դասավանդվեն տրված հերթականությամբ, քանի որ դրանք կառուցվում են մեկը մյուսի վրա: Յուրաքանչյուր բաժնի համար աշակերտների աշխատանքային տետրը պարունակում է բավային տեքստեր, առաջադրանքներ և աշխատաթերթիկներ:

Դրանից բացի էլեկտրոնային փաթեթը առաջարկում է լրացուցիչ նյութեր, հոդվածներ, PPT-նմուշներ և լրացուցիչ աղբյուրներ հավելյալ աշխատանքների համար:

Ֆինանսական անձնագրի դասավանդումից հետո աշակերտներն ունեն հնարավորություն լրացնելու թեստ, որը թույլ կտա գնահատել դասընթացի արդյունքում ստացած գիտելիքները:

Դասավանդման նյութեր

Ուսուցիչների ուղեցույցում ներկայացված են բովանդակությունների, ընթացակարգերի և դասի ընթացքում ֆինանսական անձնագրի կիրառման վերաբերյալ բոլոր տեղեկությունները: Առկա են նաև դասավանդման լրացուցիչ նյութեր՝ ներառյալ ավարտական թեստի հնարավոր առաջադրանքներ: Նյութերը բաժանված են միջնակարգ և ավագ դպրոցների համար առանձին ֆինանսական անձնագրերի միջև:

Լրացուցիչ նյութերում առկա են Power-Point ֆայլեր, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել դասավանդմանն առնչվող որոշ նյութեր պրոյեկտորի օգնությամբ: Բացի այդ՝ որոշ բաժինների համար կան նաև PDF ֆորմատով ներկայացված նյութեր, որոնք հնարավորություն են տալիս նյութը որակյալ տպել:

Դասագրքերը պարունակում են տեսական նյութեր, ինչպես նաև առաջադրանքներ բոլոր բաժինների համար: Նյութերը մի կողմից կատարում են տեղեկատվական գործառույթ, իսկ մյուս կողմից դասընթացի վերջում կարող են կիրառվել որպես մնայուն աղբյուր աշակերտների գիտելիքը թարմացնելու համար:



Լրացուցիչ գրականություն

Տնտեսական գիտափորձեր

- Mittelstädt, Ewald/Wiepcke, Claudia: Verhaltensökonomische Experimente – Wirtschaftliche Entscheidungssituationen im Unterrichtsexperiment, Sparkassen-SchulService, Artikel-Nr. 310 767 400, Stuttgart 2012.
- Schlösser, Hans Jürgen/Schuhen, Michael/Macha, Klaas/Niederschlag, Sivia/Schäfer, Anna-Theresa (2009): Ökonomische Experimente für den Unterricht. (Cornelsen Verlag) Berlin 2009.
- Schuhen, Michael (2005): Ökonomische Experimente (Classroom Experiments). In: Sowi-online Methodenlexikon. 2005. http://www.sowi-online.de/methoden/lexikon/experimente_schuhen.htm

Սցենարային պլանավորում

- Steinmann, Bodo/Weber, Brigit (Hrsg.): Handlungsorientierte Methoden in der Ökonomie. Neusäß 1995, S. 28-29.
- WebQuest http://www.webquests.de/

Խաղեր

- Rehm, Marco/Schuhen, Michael (2008): Planspiele in der Sekundarschule I. In: Unterricht Wirtschaft (2008), Hf. 36, S. 40-46
- Seeber, Günther (2007): Planspiele im Ökonomieunterricht. In: Retzmann, Thomas (Hrsg.): Methodentraining für den Ökonomieunterricht. Bad Schwalbach, S. 155-168.

1

Ֆինանսական անձնագիր միջնակարգ դպրոցի համար

ՓՈՂ, ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԱՎԵԼԻՆ

1.1 Դասի բովանդակություն

Բաժին 1

Տնտեսվարության պահանջմունք, կարիք և անհրաժեշտություն

Յուրաքանչյուր ոք ունի պահանջմունքներ, որոնք նա ցանկանում է բավարարել: Սակայն հասանելի միջոցների սղության պատճառով հաճախ անհրաժեշտ է լինում տնտեսել: Որոշում կայացնելու համար տարբերակներ է առաջարկում Մասլոուն, ով իր պահանջմունքների բուրգում տարբերակում է բազային և երկրորդային կամ հոգեբանական կարիքները: Միջոցների սղության պարագայում հնարավորինս լավ արդյունքների հասնելու համար տնտեսագետներն առաջնորդվում են տնտեսվարման երկու՝ մաքսիմալացման և մինիմալացման սկզբունքներով: Սղությունը իրականում ճանաչելի է դառնում միայն այն ժամանակ, երբ ինքդ ես տուժում դրանից:

Սղությանն առնչվող իրավիճակների ուսումնասիրությանն է ուղղված «նստատեղերի աճուրդ» գիտափորձը. ով չի կարողանում աթոռ սակարկել, մնում է կանգնած, ընդ որում՝ ամբողջ դասաժամին: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ աթոռի շուկան ոչ բոլոր աշակերտների համար կարող է նախատեսել աթոռ, քանի որ այդ ռեսուրսը սուղ է: Մեթոդական այս սկզբունքը կիրառվում է «առաջարկ և պահանջարկ» թեմայի մեջ, որի շրջանակներում առաջարկվում է ուսումնասիրել նաև կտորի շուկայի օրինակը, որի նպատակն է հասկանալ օպտիմալ գնագոյացման հիմքում ընկած մեխանիզմները:

Բաժին 2

Գործունակություն

Այսօր սպառումը երիտասարդների առօրյայի մաս է կազմում: Սակայն կան օրենքներ, որոնք կարող են սահմանափակել երիտասարդների սպառումը: Դասագրքում կարելի է գտնել օրենսդրական դրույթներ քաղաքացիական օրենսգրքից:

1.1 Դասի բովանդակություն



ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ

ՇԱԲԱԹ	ՇԱԲԱԹ 1	ՇԱԲԱԹ 2	ՇԱԲԱԹ 3	ՇԱԲԱԹ 4	ՇԱԲԱԹ 5	ՇԱԲԱԹ 6	ՇԱԲԱԹ 7
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ							
Աշխատավարձ							
Գրպանի փող							
Գումարային նվերներ							
Ընդամենը՝ եկամուտ							
ԾԱԽՍԵՐ							
Ուտելիք և ըմպելիքներ							
Հեռախոս							
Հեծանվի ծախսեր							
Առցանց վճարովի խաղեր, երբեռ-նումներ, երգեր, ֆիլմեր և այլն							
Մուտքի վճարներ							
Երթևեկության ծախս							
Նվերներ							
Գրենական պիտույքներ							
Հագուստ							
Գրքեր, ամսագրեր							
...							
Ընդամենը՝ ծախս							
Մնացորդ							
Խնայողություն							

Բաժին 3

Ֆինանսների կառավարում

Տնտեսել ցանկացողները պետք է կարողանան կառավարել սեփական ֆինանսական միջոցները: Սա վերաբերում է ինչպես ձեռնարկություններին, այնպես էլ՝ ընտանիքներին և առանձին անհատներին: Ընդ որում՝ սեփական ֆինանսական միջոցների անընդհատ վերահսկողությունն ու կառավարումը հաճախ հոգնեցուցիչ է և պահանջում է կարգապահություն: Հենց սրա մասին պիտի տեղեկանան աշակերտները: Նրանց համար եկամուտները պարզ են և տեսանելի, սակայն ծախսերը՝ ոչ միշտ պլանավորված կամ պլանավորելի: Նրանք երբեմն չգիտեն նաև, թե նախորդ շաբաթ և ամիս ինչի վրա են ծախսել իրենց գումարը: Այդ իսկ պատճառով նրանք առաջին հերթին պիտի որոշեն իրենց «ֆինանսական տեսակը», մյուս կողմից՝ սովորեն ինքնուրույն վերահսկել և կառավարել իրենց ֆինանսական միջոցները: Որպես դասընթացի մաս աշակերտներին կարող է հանձնարարվել 7-8 շաբաթ առաջ սկսել վարել անձնական ծախսերի ֆինանսական գրքույկ: Գրքույկում կատարված գրանցումները կարող են օգտագործվել հետագա բաժինների համար:

Բաժին 4

Ընթացիկ հաշիվ

Ընթացիկ հաշիվն այսօր գրավել է բաժին 3-ում ներկայացված անձնական ծախսերի ֆինանսական գրքույկի գործառույթը: Դրան մեծ մասամբ նպաստեց ընթացիկ հաշվի միջոցով իրականացվող անկանխիկ գործարքների կտրուկ աճը: Այդ պատճառով կարևոր է, որ աշակերտները ծանոթանան դրամական փոխանցումների, ուղղակի դեբետագրման և պարբերական վճարումների առանձնահատկություններին, որպեսզի կարողանան ճիշտ կողմնորոշվել փոխանցումներ և անկանխիկ գործարքներ կատարելիս: Սպառողի տեսանկյունից խիստ կարևոր է բանկային և վարկային քարտերի, ինչպես և բանկային առցանց գործարքների հետ կապված անվտանգությունը:

1.1 Դասի բովանդակություն

Բաժին 5

Խնայում և ներդրում

Յուրաքանչյուր ազգ և պետություն ունի խնայողության և ներդրումների հետ կապված առանձնահատկություններ: Համաշխարհային համեմատության մեջ հայաստանցիները խնայում են քիչ և անկանոն՝ ի տարբերություն, օրինակ, գերմանացիների: Խնայման վերաբերյալ որոշման կայացման հիմքում ընկած է «մոգական եռանկյունու» գաղափարը՝ ներդրումների ո՞ր ձևը ո՞ւմ և ի՞նչ նպատակի համար է հարմար: Ընտրություն կատարելիս որոշիչ են հետևյալ կարևոր հարցերը՝

- Որքա՞ն ժամանակով եմ ուզում ներդնել գումար, այսինքն՝ որքա՞ն ժամանակով կարող եմ հրաժարվել ունեցածս գումարից:
- Պատրա՞ստ եմ ռիսկի գնալ գումար ներդնելիս, թե՞ ակնկալում եմ, որ ես իմ ներդրված գումարը վստահաբար ամբողջապես հետ կստանամ:
- Փոքր ռիսկի դիմաց պատրա՞ստ եմ արդյոք հրաժարվել բարձր շահութաբերությունից:

Յուրաքանչյուր դրամական ներդրման ժամանակ միմյանց հանդեպ հակակշռության մեջ են ներդրման ապահովությունը, շահութաբերությունն ու ներդրված գումարի հասանելիությունը: Քանի որ հնարավոր չէ միաժամանակ ապահովել բոլոր երեք գործոնները, խոսում ենք ներդրման մոգական եռանկյան մասին:

Այս բաժնում ներկայացվում է նաև տոկոսադրույքի գաղափարը՝ որպես ներդրված կապիտալից ստացված շահույթի արտահայտում, ինչի միջոցով տեղի է ունենում տոկոսների կուտակման գործընթաց:

Բաժին 6

Վարկ

Երիտասարդները չեն պատկերացնում՝ ինչ է պարտքը, և որոնք են պարտքի առաջացման հիմքերը: Այս բաժնում քննարկման են դրվում պարտք վերցնելու հիմնական դրդապատճառները և ներկայացվում պարտատերերի տեսակները: Հարկ է նշել, որ պարտքերը բաժանվում են «լավ» կամ «վատ» պարտքերի՝ պայմանավորված «ներդրում» և «սպառում» հասկացություններով: Աշակերտների մոտ պարտքերին առնչվող հնարավոր իրավիճակների հանդեպ հետաքրքրություն առաջացնելու համար այս բաժինը ավարտվում է վարկերի տարբեր տեսակների և դրանց հետ կապված ծախսերի ներկայացմամբ:

1.2 Ընթացակարգ

Բաժին 1

Տնտեսվարության պահանջմունք, կարիք և անհրաժեշտություն

Նախատեսվում է իրականացնել
4 դասաժամում

Նպատակներ

- Աշակերտները կարող են դասակարգել իրենց և ուրիշների պահանջմունքները Մասլոուի բուրգի համաձայն:
- Նրանք կարող են օգտագործել տնտեսական տարբեր սկզբունքներ՝ որպես որոշումների կայացման հիմք, և կիրառել դրանք առօրյա կյանքում:
- Աշակերտները կարող են մասնակցել աճուրդների և ձեռք բերել հետագա աճուրդներին մասնակցելու հնարավորություն:
- Աշակերտները կարող են կայացնել որոշումներ՝ հիմնվելով շուկաներում գնագոյացման ամենակարևոր մեխանիզմների վրա:

Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա

- Բոլորն ունեն պահանջմունքներ: Ինչպե՞ս կարելի է դասակարգել տարբեր պահանջմունքները:
- Միջոցները գրեթե երբեք չեն բավականացնում բոլոր պահանջմունքների բավարարման համար: Որոշումների կայացման ինչպիսի՞ կանոններ է առաջարկում տնտեսագիտությունը դրական լուծում գտնելու համար:
- Այնտեղ, որտեղ առաջարկն ու պահանջարկը հատվում են, գինը և քանակը գալիս են հավասարակշռության: Սակայն հավվադեպ է պատահում, որ այն իրենից ներկայացնում է մեկ կետ. գիտափորձի արդյունքում պարզ է դառնում, որ խոսքը կետերի ամբողջության մասին է:

Ուսումնական նյութեր

Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 4–5, Լրացուցիչ նյութեր՝
→ Մասլոուի «Պահանջմունքների բուրգ»
Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 6–7, Լրացուցիչ նյութեր՝
→ «Տնտեսվարության սկզբունքներ»
→ «Նստատեղերի աճուրդ», ընդհանուր տեղեկություններ
→ «Նստատեղերի աճուրդ», աթոռների դասավորության պլան
Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 8–12, Լրացուցիչ նյութեր՝
→ «Կոորդինատային համակարգ»
→ «PIT-շուկա», ընդհանուր տեղեկություններ
→ «PIT-շուկա», գնորդի խաղաքարտեր
→ «PIT-շուկա», վաճառողի խաղաքարտեր
→ «PIT-շուկա», գործող կանոններ
→ «PIT-շուկա», գործարքների աղյուսակ

1.2 Ընթացակարգ

Բաժին 2

Գործունակություն

Նախատեսվում է իրականացնել
1 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են գնահատել իրենց ծախսելու սովորությունները և խորհել դրանց շուրջ: Նրանք ի վիճակի են հասկանալ գնումներին առնչվող օրենսդրական տեքստերը և դրանց օգնությամբ կայացնել որոշումներ:	• Բանավեճ հետևյալ արտահայտության շուրջ. «Երիտասարդներն այսօր հանդիսանում են սպառման մշակույթի կենտրոնական մաս»: • Իրավական քաղվածքների մշակում և օրինակների լուծում:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 13–15, Լրացուցիչ նյութեր՝** → «Որքա՞ն գրպանի փող են ստանում երիտասարդները» → «Օրինակներ»

Բաժին 3

Ֆինանսների կառավարում

Նախատեսվում է իրականացնել
2 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են գնահատել իրենց սեփական ֆինանսների կառավարման հմտությունները: • Նրանք ստանում են ընդհանուր տեղեկություններ տնային տնտեսությունների ֆինանսական կառուցվածքի վերաբերյալ և կարող են իրականացնել աշխատավարձի հաշվարկ:	• Ինքնագնահատում՝ «Ո՞ր տեսակին եմ պատկանում ես» • Մասնավոր տնտեսությունների ֆինանսական ռազմավարության և կառուցվածքի քննարկում՝ հետագայում սեփական տնտեսությունը պլանավորելու հնարավորությամբ:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 16–20, Լրացուցիչ նյութեր՝** → «Եկամուտներ և ծախսեր» → «Աշխատավարձի հաշվարկաթերթիկ» → «Ո՞ր տեսակին եմ պատկանում ես», գնահատում

1.2 Ընթացակարգ

Բաժին 4

Ընթացիկ հաշիվ

Նախատեսվում է իրականացնել
4 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են գնահատել ընթացիկ հաշվի նշանակությունն ապագայում իրենց ֆինանսները ճիշտ կառավարելու համար: • Նրանք կարող են վարել իրենց ընթացիկ հաշիվը և տեղեկացված լինել ընթացիկ հաշվի և առցանց բանկային գործարքների անվտանգության խնդիրներին: • Նրանք կարող են տարբերակել դրամական փոխանցումները, ուղղակի դեբետագրումը և պարբերական վճարումները:	• Ինչ է ընթացիկ հաշիվը: Հաշվի ինչ տեսակներ կան: Ինչպես կարելի է հաշիվ բացել: • Ինչ գործարքների դեպքում եմ ես կատարում փոխանցումներ կամ պարբերական վճարումներ/ուղղակի դեբետագրում: • Ո՞րն է բանկային և վարկային քարտերի միջև տարբերությունը:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 21–37, Լրացուցիչ նյութեր՝** → «Ընթացիկ հաշվի քաղվածք» → «Վճարման հանձնարարական» → «Ուղղակի դեբետագրման հրահանգ» → «Ուղղակի դեբետագրման հանձնարարական» → «Պարբերական վճարումների հանձնարարական» → «Փոխանցում, պարբերական վճարումների հանձնարարական և ուղղակի դեբետագրում»

Բաժին 5

Խնայում և ներդրում

Նախատեսվում է իրականացնել
4 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Առաջնորդվելով որոշակի չափանիշներով՝ աշակերտները կարող են ճիշտ գնահատել ներդրման հնարավորությունները:	• Ով որքա՞ն գումար է ծախսում և ինչի՞ վրա: • Ներդրման հնարավորությունները և մոգական եռանկյունին: • Հաշվարկ և տոկոսադրույքներ:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 38–44, Լրացուցիչ նյութեր՝** → «Խնայման հիմնական նպատակները» → «Խնայումը որպես վճռորոշ խնդիր» → «Ներդրման ձևերի դասակարգում» → «Մոգական եռանկյունի»

1.2 Ընթացակարգ



Բաժին 6

Վարկ

Նախատեսվում է իրականացնել
4 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարողանում են տարբերել սպառողական վարկը ներդրումային վարկից: Նրանք գիտեն վարկ վերցնելու դրդապատճառները և վարկատուներին: Նրանք ճանաչում են վարկի տրամադրման սկզբունքները և կարող են տարբերակել վարկի տեսակները՝ բերելով հիմնավորումներ:	• Ինչ է պարտքը/վարկը: • Որոնք են պարտք վերցնելու դրդապատճառները և ովքեր են պարտատերերը: • Պարտքը ոչ միշտ է պարտք: Ինչ է վարկը: • Որոնք են վարկավորման իրավական հիմքերը: Ինչ արժե վարկը:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 45–56, Լրացուցիչ նյութեր՝** → «Դատողություններ պարտք թեմայի վերաբերյալ» → «Պարտքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ» → «Պարտքը ոչ միշտ է պարտք» → «Բլոկ-սխեմա»

2.1 Դասի բովանդակություն

Բաժին 1

Պետություն, տնտեսություն և հասարակություն

Տնտեսական քաղաքականությունը ներառում է պետական բոլոր միջոցառումները, որոնք ուղղված են որևէ երկրի տնտեսական կարգին և հասարակական արժեքներին համապատասխան տնտեսական կյանք ձևավորելուն և կանոնակարգելուն: Տնտեսաքաղաքական գործողությունները սովորաբար կապված են ընտրության կատարման հետ, ինչը ենթադրում է առկա այլընտրանքային տարբերակների համապարփակ գնահատում: Կատարվելիք ընտրությունը պիտի համապատասխանի հասարակության հիմնական արժեքներին, ինչպիսիք են ապատությունը, արդարությունը, անվտանգությունը և առաջընթացը: Տնտեսական քաղաքականությունն իր հերթին պետք է հիմնված լինի ժողովրդավարության և ռացիոնալության սկզբունքների վրա:

Կարևոր է հիմնական արժեքների ու նրանց փոխկապակցվածությունների բովանդակային քննարկումը: Այսպես, օրինակ, արդարություն ու հավասարություն գաղափարները սերտ փոխկապակցված են, քանի որ անարդարությունը միշտ ներառում է անհավասարություն: Օրինակ՝ հարկային դաշտում գործող կարգավորումները չեն կարող հաշվի առնել տնտեսական բոլոր իրավիճակները և առավելագույնս պաշտպանել բոլորի շահերը: Այս տեսանկյունից կարող են անտեսված համարվել արդարություն և հավասարություն հիմնարար արժեքները: Մյուս կողմից, հարկային քաղաքականության առավել ճկունացումը կարող է հանգեցնել համակարգի չափականց բարդացման՝ այն դարձնելով դժվարըմբռնելի շատերի համար: Նույնը վերաբերում է նաև սոցիալական ապահովության համակարգերին և աղքատության մեջ հայտնված մարդկանց համար նախատեսված տնտեսական աջակցության ծրագրերին:

Գոյություն ունեն տնտեսության վարման բազմաթիվ մոդելներ և մեխանիզմներ: Հայաստանի Հանրապետության, ինչպես և, օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական կարգի հիմքում ընկած է շուկայական տնտեսությունը: Զարգացման հեռանկարի տեսանկյունից աշակերտներին կարևոր է շուկայական տնտեսությունը ներկայացնել որպես մարդկանց կողմից ստեղծված արտադրանքի ամբողջություն և ցույց տալ դրա հիմքում ընկած շահերը, նորմերը և արժեքային պատկերացումները, ինչպես նաև դրա փոխակերպելի և ձևավորելի լինելը: Կարևոր հասկացություններ սովորելուց և սոցիալ-շուկայական տնտեսության կոնցեպտը հասկանալուց բացի՝ աշակերտները պիտի նաև ձևավորեն տնտեսաքաղաքական քննարկման համար անհրաժեշտ գիտելիքներ, ինչպես նաև սովորեն կիրառել դրանք առօրյայում:

2.1 Դասի բովանդակություն

Բաժին 2

Տնտեսություն + Քաղաքականություն= Տնտեսական քաղաքականություն

Վերնագրից պարզ է դառնում, որ տնտեսաքաղաքական վերլուծությունը կարևոր է կառուցել տնտեսական և քաղաքական գործիքների, նպատակների, գործող անձանց ու նրանց ստանձնած դերերի միասնական դիտարկման հիման վրա: Յուրաքանչյուր պետության համար առաջնահերթ է տնտեսաքաղաքական հստակ ռազմավարության ձևավորումն ու որդեգրումը:

Ցանկացած նպատակի հասնելու համար անհրաժեշտ է տրամադրության տակ ունենալ նաև այդ նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքներ: Տնտեսական քաղաքականության կարևոր գործիքներ են հանդիսանում, օրինակ, հարկերը, սուբսիդիաները, տոկոսադրույքը և կառուցվածքային բարեփոխումները, իսկ գլխավոր դերակատարներ են համարվում Կառավարությունը, Կենտրոնական բանկն ու Ազգային ժողովը, թեպետ գնալով ավելի է կարևորվում նաև միջազգային կառույցների և միությունների դերը:
Տնտեսաքաղաքական գործունեության կարևոր ոլորտներն են պետական միջամտության քաղաքականությունը, մրցակցության քաղաքականությունը, կայունության և աճի քաղաքականությունը, ինչպես նաև արտաքին առևտրի և արժութային քաղաքականությունը:

Տնտեսական համակարգում իրենց ներկայիս և ապագա դերակատարման մեջ երիտասարդների կողմնորոշման և հմուտ գործելու հիմքն են կազմում այս ոլորտների մասին գիտելիքները, ընկալումներն ու մեթոդները: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ նրանք ծանոթանան տնտեսական այնպիսի հայեցակարգերին և հասկացություններին, ինչպիսիք են «հանրային բարիքներ», «օլիգոպոլիա» և «շուկայական իշխանություն»:

2.1 Դասի բովանդակություն

Բաժին 3

Ո՞ՐՆ Է ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ԲԱՂԱԴՐԻՉԸ

Պետության սոցիալական ենթակառուցվածքները ենթադրում են համապատասխան տնտեսական քաղաքականության մշակում և որդեգրում, որի հիմքում սովորաբար ընկած է սոցիալական պաշտպանության ու ապահովության և եկամուտների մասին չափորոշիչների ձևավորումը: Բնական է, որ Հայաստանի Հանրապետությունում անցումը շուկայական տնտեսության տեղի է ունեցել աստիճանաբար՝ ուղեկցվելով սոցիալական որոշակի փոփոխություններով: Սոցիալական շուկայական տնտեսություն հասկացության հիմնադիրն է Ալֆրեդ Մյուլեր-Արմաքը: Այն հիմնվում է ազատ շուկայական տնտեսության տարրերի և շուկայատնտեսական գործընթացներ վրա, որոնք, հնարավոր է, երբեմն պահանջեն պետական որոշակի միջամտություն: Սա հիմնվում է այն ենթադրության վրա, որ թեև շուկայական տնտեսության մոդելի հիմքում ընկած է արդյունավետությունը, այն ոչ միշտ է կարողանում ապահովել սոցիալական արդարություն: Ազատ շուկայատնտեսական միջավայրի հիմք են հանդիսանում հետևյալ սկզբունքները.

1. շուկայի սկզբունք
2. ապակենտրոն պլանավորում
3. ազատության համընդհանուր երաշխիք
4. պետության պասիվ դեր
5. տնտեսվարման և եկամտաբերության սկզբունք
6. մրցակցության սկզբունք

Ի հավելում վերը նշված սկզբունքների՝ սոցիալական շուկայական տնտեսությունը ենթադրում է նաև սոցիալական հավասարակշռություն: Պետական գործունեության համապատասխան ոլորտներն են հարկային քաղաքականությունը, սոցիալական ապահովագրությունը, կրթական համակարգին առնչվող քաղաքականությունը, բնակարանաշինությունը և քաղաքների պլանավորումը, որոնք կապահովեն աշխատողների իրավունքների և եկամուտների հետ կապված սոցիալական հավասարակշռությունը:

Մյուլեր-Արմաքը սոցիալական շուկայական տնտեսություն հասկացության տակ հասկանում էր տնտեսական մի կարգ, որը շուկայում ազատության սկզբունքը կապում է սոցիալական հավասարակշռության սկզբունքի հետ: Սոցիալական հավասարակշռության մասին մտահոգվելը, ըստ Մյուլեր-Արմաքի, պետության խնդիրն է: Պետության առաջադրանքն է բարձրացնել բարեկեցությունն ու ապահովել հասարակության լիակատար զբաղվածությունը սոցիալական ապահովության ու կենսաթոշակային ծրագրերի միջոցով՝ պետական եկամուտների օպտիմալ վերաբաշխման միջոցով: Սա տեղի է ունենում սոցիալական պաշտպանվածություն և հավասարություն ապահովելու նպատակով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության ձևավորման գործընթացին, այն տեղի է ունեցել երեք հիմնական փուլով՝ շուկայական հարաբերությունների ձևավորման սկիզբ, սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերի տարանջատման սկիզբ ու սոցիալական բարեփոխումների իրականացման փուլ (Յարմալոյան, 2014): 1991-ից մինչև 1995 թվականն ընկած ժամանակահատվածը կարելի է բնորոշել որպես հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնող ամբողջական սոցիալական քաղաքականության մշակման սկզբնափուլ: Սոցիալական պաշտպանությանն ուղղված մեխանիզմների բացակայությունը բարդ խնդիր էր ներկայացնում նորանկախ Հայաստանի համար, քանի որ առկա սկզբունքները հիմնականում բխում էին ազգային սովորույթներից, և չկար հստակ հաստատված ընդհանրական համակարգ: Երկրորդ փուլը՝ 1996-ից մինչև 2000 թվական, սոցիալական պաշտպանության նոր կառուցակարգերի ստեղծման ժամանակաշրջանն էր, որը միաժամանակ արտացոլում էր այդ բարեփոխումների՝ ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթ կրելը: Այս ընթացքում տեղի ունեցավ սոցիալական ոլորտին ուղղված մի շարք ծրագրերի իրականացում և կառավարման համակարգի տեխնիկական վինում:

2.1 Դասի բովանդակություն

Երրորդ փուլը հատկանշվեց Հայաստանի՝ Եվրախորհրդին անդամակցությամբ, որը ենթադրում էր նոր սկզբունքների և արդիական գաղափարների հիման վրա ամրագրված սոցիալական իրավունքների ու նպատակների իրագործման պատասխանատվության ստանձնում: ՀՀ սոցիալական օրենսդրության համապատասխանեցումը Եվրոպական չափորոշիչներին դարձավ առաջնահերթություն:

ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում ներկայումս նույնպես ընթանում են լայնամասշտաբ բարեփոխումներ, ինչպես, օրինակ, փոփոխություններ կենսաթոշակային համակարգում, ծրագրեր սոցիալական ծառայությունների ինտեգրման և համալիր մատուցման ուղղությամբ, սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրում համայնքներում և այլն (Յարմալոյան, 2014):

Աշակերտները, ականատես լինելով տնտեսական համակարգի ձևավորմանը, իրենց (գալիք) աշխատանքային գործունեությունը սկսելուն պես դառնալու են սոցիալական անվտանգության համակարգի սուբյեկտ: Սոցիալական համակարգի ապագայի վերաբերյալ հանրային քննարկումների միջոցով նրանք գիտակցում են դրանց բարեփոխումների անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով այս բաժնի նպատակն այն է, որ աշակերտները ոչ թե թեմակենտրոն կերպով դիրքորոշումներ մշակեն, այլ իրենց ունեցած տնտեսաքաղաքական տարրական գիտելիքները կիրառեն տնտեսական իրավիճակների քաղաքական հարցադրումներում, ինչպես նաև սահմանեն շահերին առնչվող՝ տարբեր դիրքերից բխող տնտեսական և սոցիալական հարցադրումներ:

Բաժին 4

Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում

Ֆինանսական ընդհանուր կրթվածություն թեմայի վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ շատ քաղաքացիներ չունեն տարրական ֆինանսական գիտելիքներ: Այդ պատճառով միջնակարգ դպրոցի համար նախատեսված ֆինանսական անձնագրի շրջանակում քննարկվում և աշակերտների համար հասանելի տարբերակով պարզաբանվում են առօրյա ֆինանսական գործարքներ: Ավագ դպրոցի համար նախատեսված ֆինանսական անձնագրում այս գիտելիքները պետք է հեռանկարային տեսանկյունից ընդլայնվեն ունեցվածքի ձևավորման և կենսաթոշակի ոլորտների վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատերն իրենց ապագա կենսաթոշակի չափը չեն կարողանում ճիշտ գնահատել: Աշխատողներին հաճախ հայտնի չեն նաև կենսաթոշակային համակարգերի և իրականացված բարեփոխումների ընձեռած նոր հնարավորությունները: Այդ իսկ պատճառով այս գլխում կներկայացվեն սոցիալական ապահովության մասին տարբեր մեխանիզմներ և պրոդուկտների առանձին կատեգորիաներ: Աշակերտներին ամենից առաջ պետք է շահագրգռել մասնավոր սոցիալական ապահովագրության անհրաժեշտությամբ, որպեսզի նրանց մոտ ստեղծվի խնդրի կարևորության գիտակցում: Այդ նպատակին են ծառայում ուսուցչի ներածական վեկույցը և բարդ տոկոսի էֆեկտի քննարկումը:

2.1 Դասի բովանդակություն

Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային քաղաքականությունը հիմնված է կենսաթոշակի իրավունքի իրականացման, ֆինանսական կայունության և զարգացման, սոցիալական համերաշխության ու արդարության, ինչպես նաև կենսաապահովման նվազագույն զամբյուղի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափի ապահովման սկզբունքների վրա: Կենսաթոշակային արմատական բարեփոխումների նախաձեռնումն ու իրականացումը ներկայումս ևս կրում են շարունակական բնույթ:
Թեև թոշակառուի կյանքն ու առընթեր թեմաներն աշակերտների համար հեռավոր ապագային առնչվող հարցեր են, դրանք կարևոր են նաև մասնագիտության կամ ուսման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Դպրոցի առանձնահատուկ առաջադրանքներից մեկն է աշակերտներին շահագրգռել և նրանց տալ կյանքի տարբեր ոլորտներում անհրաժեշտ ֆինանսական գիտելիքներ, քանի որ այսօրվա վճիռները կարող են որոշիչ դեր ունենալ ապագա բարեկեցության համար:

Ուսումնական նպատակն է ձևավորել համակարգային և այլընտրանքային մտածելակերպ, տեղեկությունները հիմնովին վերլուծելու կարողություն, ներկա խնդիրների և լուծման հնարավոր տարբերակների քննարկման հիման վրա որոշում կայացնելու ունակություն, ինչպես նաև պատրաստակամություն և ունակություն մասնակցելու արժանավայել ապագայի կառուցման գործընթացին:

2.2 Ընթացակարգ

Բաժին 1

Պետություն, տնտեսություն և հասարակություն

Նախատեսվում է իրականացնել
2 դասաժամում

Նպատակներ

- Աշակերտները կարող են դասակարգել այնպիսի տնտեսական գաղափարներ և հասկացություններ, ինչպիսիք են՝ «այլընտրանքային ծախսեր», «ապրանքների սակավություն», «տնտեսման սկզբունք», «պլանավորման քաղաքականություն» և կիրառել դրանք տնտեսաքաղաքական բանավեճերում և առօրյայում՝ որպես գիտելիք և հմտություն:
- Աշակերտները կարող են անվանել տնտեսական քաղաքականության հիմնարժեքները, բացատրել դրա հատկանիշները, հարաբերել դրանք միմյանց հետ և քննադատաբար անդրադառնալ դրանց:

Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա

- Ինչո՞ւ է առօրյայում տնտեսական մտածողությունն այդքան դժվար թե՛ անհատական, թե՛ կոլեկտիվ մակարդակում:
- Ինչպիսի՞ հարաբերություններ կան պետության, տնտեսության և հասարակության միջև:
- Ո՞ր արժեքներն են ստեղծում տնտեսական քաղաքականության հիմքը:
- Եկրափակիչ բանավեճի հարցեր:

  Ինչպե՞ս են հարաբերվում «արդարություն» և «ազատություն» հիմնական արժեքները միմյանց հետ:

  Ինչպիսի՞ սահմանափակումների են ենթարկվում հիմնական արժեքները:

  Կա՞ն արդյոք այլ հիմնական արժեքներ պետության տնտեսաքաղաքական կառուցվածքում:

Ուսումնական նյութեր

Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 4–8,
Լրացուցիչ նյութեր՝
→ «Լիբերալներն ու պետությունը»
→ «4 հիմնարար արժեքներ»
→ «Մտքի քարտեզ»

2.2 Ընթացակարգ

Բաժին 2

Տնտեսություն + Քաղաքականություն= Տնտեսական քաղաքականություն

Նախատեսվում է իրականացնել
2 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են բացատրել «բաշխում», «արտաքին ներգործություններ», «հանրային բարիք», «օլիգոպոլիա», «մենաշնորհ» և «շուկայական իշխանություն» տնտեսական կարևոր հասկացությունները: • Նրանք կարող են անվանել տնտեսական քաղաքականության գործունեության դաշտերը, գործիքները և տարբեր դերակատարումները, իրենց կատարած աշխատանքի/նյութի հիման վրա կատարել հետազոտություն տնտեսական քաղաքական որոշումների կայացմանը հասնելու համար, ինչպես նաև տեսանելի ներկայացնել տնտեսաքաղաքական որոշումների միջև եղած կապերը: • Խաղային տեսության տնտեսական գործիքակազմի միջոցով նրանք սովորում են վերլուծել առօրյա իրավիճակները և գնահատել դրանք:	• Ինչ դերակատարություն ունի պետությունը տնտեսական շրջանառության մեջ: • Ինչպե՞ս են որոշվում օլիգոպոլիայի՝ շուկայում գործող դերերը: • Ինչ նպատակներ է հետապնդում ՀՀ տնտեսական քաղաքականությունը: Ո՞վ և ինչպիսի՞ գործիքներ է կիրառում: • Վերոնշյալ հարցադրումները կարող են օգնել ստանալ հետադարձ կապ: • Լրացուցիչ հարցադրումներ. Դասե՛ք հետևյալ տնտեսաքաղաքական գործընթացներն ըստ իրենց նշանակության և կարևորության՝ 1. Գործազրկության կրճատմանն ուղղված քայլերի ընդլայնում: 2. Մասնագիտության ազատ ընտրության հնարավորություն: 3. Եկամտահարկի իջեցում: 4. Կենտրոնական բանկի անկախության երաշխիք: 5. Պայմանագրային ազատության երաշխիք: 6. Մաքսատուրքի բարձրացում: • Ինչո՞ւ է առհասարակ կարևոր մրցակցությունը: Արդյո՞ք դրանով պետությունը չափից ավելի չի միջամտում տնտեսական գործընթացներին:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 9–21**

Տնային առաջադրանքներ լրացուցիչ հետազոտության համար

Լրացուցիչ հետազոտության համար առաջարկում ենք հետևյալ հարցադրումները. «Տնտեսության ո՞ր ճյուղերում են հատկապես հեշտ առաջանում կարտելներ»: Պատասխանները կարող եք փնտրել համացանցում: Բանալի բառերի օգնությամբ ամփոփե՛ք «Միջազգային արժութային ֆոնդի» հիմնական խնդիրներն ու նպատակները: Դուք կարող եք գտնել ֆոնդի կողմից արված նկարագրությունը համացանցում՝ http://www.imf.org/:

2.2 Ընթացակարգ

Բաժին 3

Ո՞րն է սոցիալական շուկայական տնտեսության «սոցիալական» բաղադրիչը

Նախատեսվում է իրականացնել
3 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները բացահայտում են, թե ինչ է սոցիալական շուկայական տնտեսությունը:	• Ինչ է իրենից ներկայացնում սոցիալական քաղաքականությունը: • Որո՞նք են սոցիալական քաղաքականության հիմնական նպատակները: • Որո՞նք են սոցիալական քաղաքականության հիմնական սկզբունքները: • Քննարկե՛ք խմբերով, թե ինչո՞ւ պետք է սոցիալական պետությունը հիմնված լինի միաժամանակ համերաշխության և անհատական սոցիալական պատասխանատվության սկզբունքների վրա:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 22–23**
• Աշակերտները կարող են տարբեր տեսանկյուններից սահմանել ՀՀ տնտեսական և սոցիալական խնդիրներ ու դրանց հիման վրա ձևավորել սեփական դիրքորոշում:	• Պատրաստե՛ք թռուցիկ ՀՀ տնտեսական կարգի մասին, որը աշակերտներին կպարզաբանի ՀՀ սոցիալական քաղաքականության սկզբունքները:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 24–25**

2.2 Ընթացակարգ

Բաժին 4

Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում

Նախատեսվում է իրականացնել
3 դասաժամում

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են տարբերել խնայողության տարբեր ձևերը: Նրանք ի վիճակի են օգտագործել հարցաթերթիկը՝ որպես տվյալների հավաքագրման գործիք և քննարկման դնել հավաքագրված արդյունքները:	• «Պետք է սովորել և կարողանալ խնայել»: • Ստեղծե՛ք փորձարարական տվյալների հավքագրման սեփական փոքրիկ հարցաթերթիկ երիտասարդների խնայողության դրդապատճառների վերաբերյալ: Անցկացրե՛ք հարցում ձեր դասարանում և ամփոփե՛ք արդյունքները: • Համեմատե՛ք ձեր արդյունքները ՀՀ քաղաքացիների խնայողության դրդապատճառների հետ: • Քննարկե՛ք ՀՀ-ում դեմոգրաֆիկ վարգացման միտումներն ու հայաստանյան կենսաթոշակային համակարգի բարեփոխումները:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 26,** → «Հարցաթերթիկ խնայողություն կատարելու դրդապատճառների վերաբերյալ»
• Աշակերտները կարող են գնահատել կենսաթոշակային համակարգերի արդյունավետությունն՝ ըստ սահմանված չափանիշների: Ինչ ազդեցություն ունի բարդ տոկոսադրույքը ներդրված գումարի վրա:	• Որո՞նք են կենսաթոշակային համակարգերի ընդհանուր նախագծերի գնահատման առաջնային և երկրորդային չափանիշները: • Սահմանե՛ք կենսաթոշակային համակարգերի համարժեքության, մատչելիության, կայունության, հուսալիության, հավասարության և կանխատեսելիության սկզբունքները:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 27**

2.2 Ընթացակարգ

Նպատակներ	Ուսումնական նյութերի կառուցվածքը հիմնված է բանալի հարցերի և աշխատանքային քայլերի վրա	Ուսումնական նյութեր
• Աշակերտները կարող են վերլուծել Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգը և համեմատել այն այլ երկրների փորձի հետ:	• Ներկայացրե՛ք Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային բարեփոխումների դրդապատճառները: • Պարզաբանե՛ք Հայաստանի Հանրապետության նախկին և ներկայիս կենսաթոշակային համակարգերի տարբերությունները:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 28–29**
• Աշակերտները կարող են վերլուծել տեղեկությունները և կիրառել դրանք խնդրի վրա: Նրանք սովորում են մտածել համակարգված, ինչը, այլ բաների հետ մեկտեղ, վարգացնում է նրանց՝ որոշումներ կայացնելու ունակությունը:	• Ի՞նչ ազդեցություն ունի բարդ տոկոսադրույքը ներդրված գումարի վրա:	**Հիմնական տեքստ և առաջադրանքներ, էջ՝ 30**

2.3 Ցուցումներ առաջադրանքների կատարման համար

Բաժին 1

Պետություն, տնտեսություն և հասարակություն

Լուծման ցուցում
→Առաջադրանք 3

Հարցը հետևյալն է. «Խմե՞մ գինին, թե՞ ոչ»: Եթե աշակերտը չի վերլուծում իրավիճակը տնտեսական տեսանկյունից, նա կսկսի մտածել գինու արժեքի մասին, և հնարավոր է՝ չկարողանա համակերպվել գինին չխմելու և թափելու մտքի հետ: Տնտեսական մտածողություն ցուցաբերելու դեպքում նա ինքն իրեն հարց կտա, թե որն է թափելու այլընտրանքը: Տարբերակներից մեկը վատ գինին խմելն է, ինչը կարող է առաջացնել գլխացավ: Ուսուցիչը պետք է մատնացույց անի այն հանգամանքը, որ գինին այլևս որևէ էական նշանակություն չունի որոշման կայացման հարցում, քանի որ այս դեպքում խոսք է գնում այսպես կոչված անվերադարձ ծախսերի մասին:

Բաժին 2

Տնտեսություն + Քաղաքականություն= Տնտեսական քաղաքականությունն

Լուծման ցուցում
→Առաջադրանք 1

Ա Արտաքին ծախսեր. երթևեկությունը, արդյունաբերությունը և տնային տնտեսություններն իրենց գործունեությամբ աղտոտում են օդը և դրանով առաջ են բերում անտառների վերացման խնդիրներ: Միջազգային տեսանկյունից պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օդի աղտոտվածությունը մի երկրում կարող է հանգեցնել անտառների վերացմանը նաև այլ երկրներում:

Բ Արտաքին ծախսեր. երթևեկության մասնակիցները չեն լսում իրենց ստեղծած աղմուկը, սակայն այն ամենայն հավանականությամբ լսում են բնակիչները:

Գ Ֆինանսական արտաքին ներգործություն. հողատարածքների սպեկուլյանտները կարող են որոշ ժամանակով այնքան բարձրացնել անշարժ գույքի գները, որ միջին եկամուտ ունեցող բնակիչները տվյալ տարածքում հավիվ թե կարողանան բնակարան գնել: Նմանատիպ արտաքին ֆինանսական ներգործություններն առաջանում են շուկայում ներքին համաձայնությունների արդյունքում և ազդում գների վրա: Վերջիններս կոչվում են արտաքին տեխնոլոգիական ներգործություններ և գտնվում են տնտեսաքաղաքական շահի առաջին պլանում:

Դ Արտաքին օգուտ. այն հասարակությունում, որտեղ մարդկանց մեծամասնությունը ավնիվ է, տիրում է վստահության մթնոլորտ: Վստահությունը նվազեցնում է վերահսկողության ծախսերը նաև նրանց համար, ովքեր մասնակցություն չեն ունեցել վստահության կառուցման գործընթացին:

2.3 Ցուցումներ առաջադրանքների կատարման համար

Լուծման ցուցում
→Առաջադրանք 2

Ա Համալսարան հաճախելուց կարող են զրկվել չվճարողները (վճարովի ծրագրի պարագայում): Այդ պատճառով համալսարանները կարող են լինել մասնավոր սեփականություն: Համալսարանը կարող է ունենալ նաև արտաքին ներգործություններ, մասնավորապես՝ կատարել գիտական ուսումնասիրություններ, որոնք օգուտ կբերեն բոլորին, և որոնցից շահ ունեն բոլորը: Այս տեսանկյունից դրանք դառնում են հանրային բարիք:

Բ Համալսարաններից ավելի շատ հանրային սեփականության բնույթ են կրում տարրական դպրոցները: Սովորելով գրել և կարդալ՝ երեխաները օգուտ են բերում ոչ միայն իրենք իրենց, այլև հասարակության բոլոր անդամներին: Այս դեպքում օգուտ ստանալուց չի կարող զրկվել ոչ ոք:

Գ Կինոթատրոնները մասնավոր սեփականություն են. ով չի վճարում, չի կարող մտնել ներս: Այստեղ էական արտաքին ներգործություններ չկան: Սակայն կարող են լինել նաև բացառություններ, օրինակ՝ բացօթյա կինոթատրոնները, որոնք բաց են բոլորի համար:

Դ Հանրային սեփականության օրինակ. ոչ մեկին հնարավոր չէ զրկել լավ օդ շնչելուց, նույնիսկ այն աղտոտողներին:

Ե Մասնավոր սեփականության օրինակ. ով չի վճարում, չի ստանում դասագրքեր: Որոշ դեպքերում, սակայն, հնարավոր է ձեռք բերել դրանք համատեղ:

Լուծման ցուցում
→Առաջադրանք 3
Տնտեսական մտածողություն և բանտ

Եթե բանտարկյալ Ա-ն անհատապես ռացիոնալ է գործում, նա կնախընտրի խոստովանել իր մեղքը, քանի որ նրա լռությունը կհանգեցնի վատ արդյունքների՝ տեսականորեն ավատավրկման, ընդ որում՝ էական չէ, թե ինչ տարբերակ է ընտրում բանտարկյալ Բ-ն: Եթե բանտարկյալ Բ-ն նույնպես խոստովանի, բանտարկյալ Ա-ի համար նույնպես խոստովանությունը կդառնա ամենառացիոնալ ճանապարհը (բանտարկյալ Ա-ն կավատավրկվի 5 տարով, հակառակ դեպքում՝ 10 տարով): Եթե բանտարկյալ Բ-ն լռի, ապա բանտարկյալ Ա-ի համար, միևնույն է, խոստովանությունն է ռացիոնալ այլընտրանքը (ավատավրկումը՝ 1 տարի, այլապես՝ 2 տարի):
Կարևոր է, որ անհատական ռացիոնալ պահվածքը այսպես կոչված բանտարկման երկընտրանքի մեջ տարբերվում է կոլեկտիվ ռացիոնալ պահվածքից. եթե յուրաքանչյուր բանտարկյալ անհատապես ռացիոնալ է գործում, ապա նրանք երկուսն էլ նախընտրում են խոստովանել: Կոլեկտիվ տեսանկյունից, սակայն, ռացիոնալ կլիներ, եթե երկուսն էլ լռեին և միմյանց հետ համագործակցեին: Հիմնական խնդիրն այստեղ այն է, որ բանտարկյալի երկընտրանքը համագործակցային խաղ չէ: Եթե խաղը մեկ անգամ է անցկացվում, ապա կողմերից ոչ մեկը չի համագործակցում մյուսի հետ:
Բազմաթիվ խաղաշրջանների դեպքում, եթե խաղաշրջանների քանակը սահմանափակ չէ, նախընտրելի տարբերակ է դառնում «tit for tat»-ը՝ «ինչպես դու ինձ, այնպես էլ ես քեզ» ռազմավարությունը, որը վրեժ լուծելու ռազմավարություն է: Եթե որևէ խաղացող չի համագործակցում, ապա մյուս խաղացողը հաջորդ խաղաշրջանում նույնպես չի համագործակցի, սակայն այնուհետև անմիջապես կվերադառնա համագործակցության:

2.3 Ցուցումներ առաջադրանքների կատարման համար

Սահմանափակ թվով խաղաշրջանների պարագայում այս ռազմավարությունը չի գործում: Առանց վերջին խաղաշրջանից հետո տուգանքների կիրառման հնարավորության վերջին խաղաշրջանում կողմերից ոչ մեկը չի ընտրի համագործակցության ուղին: Օրինակ՝ եթե վերջին խաղաշրջանի համար հաստատվում է, որ խաղացողները չեն համագործակցելու, ապա նրանք չեն համագործակցում նաև նախավերջին խաղաշրջանում և այդպես շարունակ: Պարզ է դառնում, որ ֆիքսված թվով խաղաշրջանների պարագայում՝ անգամ «tit for tat» ռազմավարություն կիրառելիս, որևէ համագործակցություն տեղի չի ունենում: «Բանտարկյալի երկընտրանք» խաղը խաղային տեսության հիմնային հայեցակարգերից է, որը կիրառվում է ոչ միայն տնտեսական հարցերի, այլև քաղաքական խնդիրների լուծման համար: Օրինակ՝ Սառը պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ միջև փոխադարձ ատոմային սպառնալիքների ֆոնին խաղային տեսության հիման վրա մշակվել են պատասխան ռազմավարական քայլեր՝ միտված հավանական տարերային աղետի կանխմանը:

Տնտեսության մեջ հաճախ են հանդիպում «բանտարկյալի երկընտրանքի» բազմապիսի կիրառություններ: Օրինակ՝ կարտելներում ձեռնարկությունները ստիպված են համագործակցել («բանտարկյալի երկընտրանքի» պարագայում՝ լռել) այլ ձեռնարկությունների հետ առանց ձեռնարկություններից որևէ մեկի՝ նախապես պայմանավորված պահվածքը վերահսկելու կամ դրա դեմ բողոքելու նախապայմանի: Այստեղ, «tit for tat» ռազմավարությունը կարող է արդյունավետ ճանապարհ լինել (անօրինական) կարտելը կայունացնելու համար: Քանի որ կարտելներն, ըստ էության, տնտեսության անառողջ միավորներ են, խոսքը սոցիալապես ցանկալի երկընտրանքի մասին է:

Լուծման ցուցում
→Առաջադրանք 4

Աշխատատեղերի ստեղծումը սերտորեն կապված է «անվտանգություն» և «ազատություն» հիմնարար արժեքների հետ, քանի որ ոչ սեփական կամքով ստեղծված գործազրկությունը նշանակում է նյութական ազատության կորուստ: Անաչառ տնտեսական մրցակցության ապահովումը վերաբերում է «արդարություն» և «անվտանգություն» հիմնարար արժեքներին, քանի որ, անառողջ տնտեսական մրցակցությունը կարող է ստեղծել եկամտի և ունեցվածքի կենտրոնացումներ, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել տնտեսական անկայունության:

Տնտեսական աճն իր հերթին կապվում է «առաջընթաց» հիմնարար արժեքի հետ և կարող է բերել նյութական ազատության աճի:

Ստեղծվող տնտեսական արդյունքների առավել հավասարաչափ բաշխումը կապված է ոչ միայն «արդարություն», այլև «անվտանգություն» հիմնարար արժեքի հետ, քանի որ անհավասարությունը կարող է հանգեցնել կոնֆլիկտների: Աղքատության հաղթահարումը ծառայում է ոչ միայն «արդարություն» հիմնարար արժեքին, այլև հանդիսանում է առաջընթացի գրավական:

Բաժին 4

Ունեցվածքի ձևավորում և կենսաթոշակային ապահովում

→Առաջադրանք

Բարդ տոկոսը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$K_t = K_0(1+i)^t$

Ընդ որում՝ K-ն ցույց է տալիս կապիտալը, t-ն՝ ժամանակը, i-ն՝ տոկոսը (8%=0,08)

$K_t = 2\ 000\ 000$ դրամ, $i = 0,05$

Ներդրում 45 տարով.

$$K_0 = \frac{2\ 000\ 000}{(1+0.5)^{45}} = 2\ 225\ 930 \text{ դ}$$

Ներդրում 20 տարով.

$$K_0 = \frac{2\ 000\ 000}{(1+0.5)^{20}} = 753\ 779 \text{ դ}$$

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Böhm, Franz (1960)*:* Die Ordnung der Wirtschaft als geschichtliche und rechtsschöpferische Leistung.

Commerzbank Ideenlabor (2004)*:* Kanon der finanziellen Allgemeinbildung.

Deutsche Gesellschaft für ökonomische Bildung (2004)*:* Kompetenzen der ökonomischen Bildung für allgemeinbildende Schulen und Bildungsstandards für den mittleren Schulabschluss. Առցանց հասանելի հետևյալ հասցեով՝
http://degoeb.de/uploads/degoeb/04_DEGOEB_Sekundarstufe-I.pdf

Karpe, Jan (2001)*:* Wirtschaftspolitische Bildung als Teil einer modernen ökonomischen Bildung. In: Schlösser, Hans Jürgen (Hrsg.): Stand und Entwicklung der ökonomischen Bildung. Bergisch Gladbach. S. 63-77.

Kruber, Klaus-Peter (2008)*:* Wirtschaftspolitische Bildung. In: Hedtke/Weber (Hrsg.): Wörterbuch Ökonomische Bildung, S. 348-350.

Pleiß, Ulrich (1994)*:* Konsumentenerziehung. In: Kruber, Klaus-Peter (Hrsg.): Didaktik der ökonomischen Bildung. Hohengehren, S. 62-69.

Schlösser, Hans Jürgen (2007)*:* Staat und Wirtschaft. In: Informationen zur politischen Bildung Nr. 294, Bonn 2007.

Seeber, Günther (2008)*:* Umweltbildung. In: Hedtke/Weber (Hrsg.): Wörterbuch ökonomische Bildung. S. 315-316.

www
TAN
MENU
OK

Sparkassen-ի դպրոցական ծառայություն

Տնտեսական թեմաները կյանքում շատ կարևոր դերակատարություն ունեն: Երիտասարդներն այսօր ունեն բարձր գնողունակություն. նրանք ակտիվ սպառողներ են և, հետևաբար, համարվում են տնտեսության պոտենցիալ սպառողների թիրախային խումբ:
Ֆինանսական անձնագիրն՝ իր առանձին բաժիններով, հայեցակարգ է՝ ուղղված ընդհանուր տնտեսական կրթությանը: Դասագրքի նպատակն է զարգացնել քննադատելու և գործելու հմտությունները:
«Ուղեցույց ուսուցիչների համար» ձեռնարկը պարունակում է նյութեր միջնակարգ և ավագ դպրոցի ֆինանսական անձնագրերի համար: Որպես նախաբան՝ բացատրվում են կարևորագույն մեթոդական գաղափարները: Լրացուցիչ տեղեկությունները, ինչպես նաև յուրաքանչյուր բաժնի համար ուսումնական և բովանդակային առաջարկներն աջակցում են դպրոցում դասագրքի արդյունավետ կիրառմանը և ապահովում են ակտիվ բազմաբովանդակ դասաժամ:

Sparkassen-ի դպրոցական ծառայությունը գերմանական UNESCO-ի հանձնաժողովի կողմից որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է ՄԱԿ-ի տասնամյակի՝ «Կրթությունը հանուն կայուն զարգացման» Ազգային գործունեության ծրագրի միջոցառումների կատալոգում:

Որպես պաշտոնական միջոցառում ընդգրկվել է համաշխարհային միջոցառումների կատալոգում

Ազգային գործունեության ծրագիր

www.sparkassen-schulservice.de